

*Հաստատված է՝*  
*«ՀՈՒՄԿ» ԿՀ Գիտական խորհրդի*  
*2018թ. դեկտեմբերի 12-ի նիստում*  
*Գիտական խորհրդի նախագահ՝*  
\_\_\_\_\_ *Հ. Սահակյան*

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ  
ՓՈԽԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1.1. «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում իրականացվող դասավանդման և ուսումնառության մեթոդների՝ դասախոսների փոխգնահատման կարգը (այսուհետ՝ Կարգ) կարգավորում է ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացը:

1.2. Կարգը սահմանում է գործող դասավանդման և ուսումնառության մեթոդների փոխգնահատման գործընթացների նպատակները, տվյալ գործընթացների իրականացման հիմնական պահանջները, հիմնական պատասխանատուներին և մասնակիցներին, ժամանակացույցերը:

**2. Դասավանդման և ուսումնառության մեթոդների փոխգնահատման իրականացման նպատակը**

2.1. Դասախոսների կողմից միմյանց մեթոդների փոխգնահատումը նպատակ ունի պարզելու, թե նրանց մշակած և կիրառած մեթոդաբանությունը որքանով է միտված դասախոսի կողմից նախանշված ելքային արդյունքների ձևավորմանը: Այն հնարավորություն կընձեռի լավագույն փորձի տարածման միջոցով բարելավել Կենտրոնում դասավանդման որակն ու կանխել դասավանդման գործընթացում հնարավոր անճշտություններն ու թերացումները:

2.2. ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողակենտրոն ուսուցում կազմակերպելու մոտեցումը, և, նման փոխգնահատում իրականացնելով, հնարավոր կլինի պարզել, թե որքանով են կիրառվող մեթոդները նպաստում ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը:

2.3. Գործընթացը նպաստում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի կատարելագործմանը, որակյալ և արդիական կրթության ապահովմանը և որակի ապահովման տեսանկյունից բարելավման գործընթացներին միտված քայլ է:

### **3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների փոխգնահատման իրականացման խնդիրները**

3.1. Գնահատել և վերագնահատել «ՀՈՒՄԿ» ԿՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական կարողություններն ու հմտությունները:

3.2. Աշխատանքներ տանել հնարավոր թերացումների շտկման ուղղությամբ:

3.3. Փոխադարձ շփումներով ապահովել մասնագետների առաջավոր փորձերի փոխանակման հնարավորությունը:

3.4. Վերանայել պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների կատարելագործման և վերապատրաստման աշխատանքների ուղղությունը:

### **4. Փոխգնահատման իրականացումը և ժամանակացույցը**

4.1. Փոխգնահատման իրականացման համար «ՀՈՒՄԿ» ԿՀ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել և քննարկման է ներկայացվել համապատասխան ձևաչափ /տե՛ս հավելված 1/:

4.2. Փոխգնահատման ձևաչափը անհրաժեշտության դեպքում ենթակա է փոփոխության՝ ռեկտորի, ուսումնական գծով փոխտնօերնի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ամբիոնի վարիչի, որակի ապահովման կենտրոնի աշխատակցի առաջարկներով:

4.3. Փոխգնահատման իրականացման և դրա անհրաժեշտության մասին դասախոսական անձնակազմը ծանոթանում է նախապես՝ գործընթացի իրականացումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

4.4. Փոխգնահատումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակում՝ ուսումնական կիսամյակի ընթացքում: Կոնկրետ ժամանակացույցն ընտրվում է ուսումնական գծով փոխտնօրենի և ամբիոնի վարիչի կողմից՝ ռեկտորի հաստատմամբ:

4.5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ սահմանված ժամկետում ամբիոն է ներկայացնում փոխգնահատման իրականացման իր

Ժամանակացույցը: Վերջինս հաստատվում է ամբիոնի և ուսումնական գծով փոխտնօրենի կողմից:

4.6. Փոխգնհատաման ձևաչափի նմուշները դասախոսական անձնակազմի ներկայացուցիչներին տրվում է գործընթացի իրականացման օրը:

4.7. Ուսումնական գծով փոխտնօրենը, ամբիոնի վարիչը և որակի ապահովման կենտրոնի պատասխանատուն հետևում են գործընթացի իրականացմանը:

4.8. Գործընթացի վերջում յուրաքանչյուր դասախոս կարող է ամբիոն ներկայացնել գրավոր նյութ՝ գործընթացի արդյունավետության վերաբերյալ, ներկայացնել իր առաջարկները:

4.9. Գործընթացի վերջում ՈԱԿ-ի կողմից կատարվում է վերլուծություն, արդյունքները ամփոփվում են ամբիոնի նիստում, անհրաժեշտության դեպքում ներկայացվում է Գիտական խորհրդի քննարկմանը: Վերջնական արդյունքը ներկայացվում է ռեկտորին: